Հարցաթերթ
Աշխարհագրություն առարկայի օլիմպիադա
դպրոցական փուլ – 2025-2026 ուս. տարի
(տևողությունը – 90 րոպե)
9 – րդ դասարան

Ընտրովի պատասխանով առաջադրանքներ

1. Հայկական լեռնաշխարհի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ

1. Հյուսիսից-հարավ ձգվածությունը մեծ է արևմուտքից արևելք ձգվածությունից
2. Հարավային ծայրակետն ավելի մոտ է արևադարձին, քան հյուսիսային ծայրակետը՝ բևեռային շրջագծին
3. Հայկական լեռնաշխարհը եզրավորում են Թեջերի, Արևելապոնտական, Մեծ Կովկասի և Հայկական Տավրոսի լեռները
4. Հիմնականում գտնվում է բարեխառն կլիմայական գոտում

2. ՀՀ բնության վերաբերյալ պնդումներից ո՞րն է սխալ

1. ՀՀ տարածքում առավել հին հասակի ապարների կարելի է հանդիպել կենտրոնական գոտում
2. ՀՀ ամենաերիտասարդ ժայթքած հրաբուխը Ծղուկն է
3. Զանգեզուրի լեռներում առկա է ներժայթուկային ապարների հզոր զանգված
4. Լճագետային նստվածքների ամենահզոր շերտը Լոռվա դաշտում է

3. Ֆյոնների արդյունքում գետերից որու՞մ է վարարման ռիսկը մեծ՝

1. Ախուրյան 2. Փամբակ 3. Գավառագետ 4. Ազատ

4. Ժողովրդագրական ճգնաժամը բնորոշ չէ՝

1. Սաուդյան Արաբիա 2. Հարավային Կորեա 3. Սինգապուր 4. Իտալիա

5. Նշված երկրներից ո՞րն ունի պաշտոնական երկու լեզու

1. Շվեյցարիա 2. Կանադա 3. Ավստրալիա 4. Չինաստան

6. Նշված ծովածոցերից որու՞մ են դիտվում մակընթացային ամենահզոր ալիքները

1. Մեքսիկական 2. Լա Պլատայի 3. Ֆանդի 4. Սիդրայի

7. Կլիմայի տիպերից չոր ու մեղմ ձմեռներով և շոգ ու խոնավ ամառներով է բնութագրվում

1. Ցամաքայինը 2. ծովայինը 3. միջերկրածովայինը 4. մուսսոնայինը

8. Նշված ծայրակետերից որու՞մ են վերջինը «դիմավորում» նոր օրը

1. Ալմադի 2. Ռոկա 3. Սենտ Չարլզ 4. Հարավ-Արևելյան

9. Ամենաբերրի հողերը նշված բնական գոտիներից բնորոշ են՝

1. Հասարակածային խոնավ մշտադալար անտառներին
2. Սավաններին և նոսրանտառներին
3. Մերձարևադարձային մշտադալար կոշտատերև անտառներին և թփուտներին
4. Տափաստաններին և անտառատափաստաններին

10. Այդ օրը հյուսիսային բևեռային շրջագծի վրա ցերեկվա տևողությունը 24ժամով գերազանցում է հարավային բևեռային շրջագծի վրա ցերեկվա տևողությանը

1. Դեկտեմբերի 22 2. Մարտի 21 3. Հունիսի 22 4. Սեպտեմբերի 23

11. Տաք և բարեխառն ջերմային գոտիների միջև սահման է՝

1. +20° իզոթերմը 2. Արևադարձային քամին
3. 20° զուգահեռականները 4. 40° զուգահեռականները

12. Անձն ով չի աշխատում, աշխատանք չի փնտրում, եկամտի աղբյուր չունի, սակայն ֆիզիկական և մտավոր կարողություններով ունակ է աշխատել կոչվում է՝

1. Գործազուրկ 2. Տնտեսապես ակտիվ 3. Աշխատուժ 4. Աշխատանքային ռեսուրս

13. Հանքային գոտի չի առաջացնում՝

1. Ոսկին 2. Անագը 3. Տիտանը 4. Նշվածներից ոչ մեկը

14. Մարդկային զարգացման համաթվի ցուցանիշով առաջատար տասնյակից բացակայում է՝

1. Իսլանդիա 2. ԱՄՆ 3. Շվեյցարիա 4. Նորվեգիա

15. Համաձայն քամիների վարդի՝ հորիզոնի ո՞ր կողմում է պետք հիմնել հողմապաշտպան անտառաշերտ



1. Հս. արլ. արլ.
2. Հս. հս. արլ.
3. Հվ. արմ.
4. Հվ. արմ. արմ.

Կարճ պատասխանով առաջադրանքներ

16. Քանի անգամ է միևնույն երկրի տարածքը փոքրանալու 1:100000 մասշտաբի քարտեզի վրա՝ համեմատած 1:50000 մասշտաբի քարտեզի հետ:

17. Ճանապարհորդը շարժվում էր արևմուտք, մինչդեռ նպատակակետը 225° ազիմուտի վրա էր: Նվազագույնը քանի՞ աստիճանի շեղմամբ էր շարժվում ճանապարհորդը:

18. Ա երկրի երկաթով ռեսուրսապահովվածությունը 60տ/մարդ է, իսկ բնակչության թիվը՝ 5մլն մարդ: Քանի՞ տարի կհերիքեն երկաթի պաշարները, եթե տարեկան շահագործվում է 1մլն տ երկաթ:

19. Ա երկրում առկա է 5300կմ խողովակաշար, 1200կմ երկաթուղի, 8500կմ ավտոճանապարհ, 15000կմ գետուղի: Որքա՞ն է ցամաքային տրանսպորտի ցանցի խտությունը յուրաքանչյուր 1000կմ² մակերեսին, եթե երկրի տարածքը 30000կմ² է:

20. Ա երկրի ուրբանիզացման մակարդակը 80% է, քաղաքաբնակների թիվը՝ 4մլն մարդ: Քանի միլիոն մարդ է գյուղաբնակ:

Առարկայական հանձնաժողովի նախագահ՝ Վարդան Ասատրյան